

# ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

**Թ. ՀԱՎՈՒՅԱՆ, Ստ. ՄԵԼԻՔ-ՔԱԽՇՅԱՆ, Հ. ԲԱՐՍԵՂՅԱՆ, Հայաստանի և Խառակից շրջանների տեղաճունների բառարան**

Երևանի պետական համալսարանի հրատարակչությունը 1986 թվականից մինչև 1998 թվականը լույս ընծայեց պրոֆեսորներ Թ. Հակոբյանի, Ստ. Մելիք-Քախշյանի և Հ. Բարսեղյանի կեսդարյա աշխատանքի արգասիք «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան» աշխատության շորս հատորը՝ Հինգերորդը՝ հրատարակման ընթացքի մեջ է:

Շուրջ կես դար առաջ ԵՊՀ երիտասարդ գիտաշխատողներ Թ. Հակոբյանը, Ստ. Մելիք-Քախշյանը, Հ. Բարսեղյանը և Գ. Զահուկյանը, համոզված լինելով, որ կովկասագիտության, բյուզանդագիտության, իրանագիտության և Մերձավոր Արևելքի երկրների պատմության, պատմական աշխարհագրության, բանասիրության ասպարեզում խոշոր ներդրում կլինի, եթե կազմվի Հայաստան աշխարհի և հարևան երկրների տեղանունների բառարան, ձեռնամուխ եղան այդ գործին: Սակայն Գ. Զահուկյանը, այլ աշխատանքի անցնելով, ստիպված եղավ թողնելու այդ աշխատանքը:

Հարյուրհազարավոր տեղանունների հայտնաբերման ու մեկնաբանման համար նյութեր ճարելը, դրանք մշակելը հեշտ գործ չէր: Անհրաժեշտ էր ուսումնասիրել տարբեր ժամանակներում հրատարակված բազմաթիվ գրական աղբյուրներ, Մատենադարանի ձևագրերը, արխիվային նյութեր, զանազան քարտեզներ, կաղմակերպել դաշտային հետազոտություններ, ձեռնարկել երթուղիներ, այդ ընթացքում հանդիպումներ ունենալ եղեռնից մազապուրծ մարդկանց հետ, կատարել լուսանկարահանումներ: Անհրաժեշտ էր գրական աղբյուրների իրարամերժ տեսակետները ստուգել ու ճշտել, կատարել այլ աշխատատար գործողություններ:

Տեղանունների բառարանի ստեղծման ուղղությամբ որոշ փորձեր նախկինում կատարվել են, և աչ մեծ ժառանգություն մեր նախնիները թողել են: Հայկական լեռնաշխարհի տեղանունների գրավոր հիշատակությունը սկսվում է դեռևս երկրորդ հազարամյակից (Ք. ա.): Օրինակ, խեթական աղբյուրներում կապիտալ տախտակների վրա կան բազմաթիվ արձանագրություններ, որտեղ հիշատակվում են Հայասա-Ազգի երկրի տեղանունները: Հետագրքի հիշատակություններ կան ասուրական աղբյուրներում, ավելի ուշ Վանի թագավորության (9—6-րդ դդ. Ք. ա.) թագավորները բազմաթիվ սեպագիր արձանագրություններ են թողել, որտեղ նշվում են այն ժամանակվա բազմաթիվ տեղանուններ:

Հույն պատմիչները, աշխարհագետները՝ Հերոդոտոս, էրատոսթենես, Ստրաբոն, ավելի ուշ՝ Պտղոմեոս, ունեն բազմաթիվ տեղանունների հիշատակություններ:

Հայ գրքի գյուտից հետո Հայոց աշխարհում գրավոր հիշատակություններն արդեն բազմական շատ են: Տեղանունների հարցով զբաղվել են պատմիչները, մասնավորապես Մովսես Խորենացին (5-րդ դ.), նա համարվում է հայոց տեղանվանագիտության հիմնադիր:

Տեղանունների կարևոր աղբյուր է միջնադարյան թախտակագրությունը: Շատերի կարծիքով (որոնք թվում նաև բառարանի հեղինակների) այդ աշխատության հեղինակը Անանիա Շիրակացին է (7-րդ դ.):

Ավելի ուշ տեղանուններին վերաբերող նյութեր հավաքել և մասամբ հրատարակել են մի շարք հայ և օտարազգի աշխարհագետներ, պատմաբաններ, բանասերներ: Հայտնի են Մխիթարյան Միաբանության գիտնականներ Ղ. Ինճիճյանը, Ղ. Ալիշանը, գերմանացի հայագետ Հյուբշմանը, Ն. Ճիվանյանը, Մ. Պոտուրյանը, Հ. Առաքելյանը, Ս. էփրիկյանը, Գր. Ղափանցյանը, Հ. Աճառյանը և ուրիշներ:

Երևանի պետական համալսարանի պրոֆեսորներ Թ. Հակոբյանի, Ս. Մելիք-Քախշյանի, Հ. Բարսեղյանի հեղինակությամբ հրատարակված բառարանը իր ծավալով ու բովանդակությամբ նմանը չունի: Սկզբում նախատեսված էր հրատարակել շորս հիմնական և մեկ լրացուցիչ հատոր, սակայն պարզվեց, որ հիմնական նյութը շորս հատորներում չի տեղավորվում, «Է՛ս տառից հետո եղած տեղանունները պետք է զետեղել հինգերորդ հատորում»:

Հրատարակված շորս հատորները միասին ունեն 581 հրատարակչական մամուլ ծավալ, մոտ 3800 էջ: Բոլոր հատորներն ունեն քարտեզներ, գունավոր, սև-սպիտակ նկարներ, ներդրիչներ:

Բառարանում հայերեն տեղանվան կողքին տրվում է ռուսերեն և օտար լեզվով տառադար-

ձուլությունը: Բառարանը կազմված է այնպես, որ տեղանունները գլխամասում տալուց հետո նըշվում են այդ օբյեկտի այլ անվանումները: Եւ: Կան այնպիսի օբյեկտներ, որոնք ունեն տասնյակներով այլ անվանումներ: Ընթացքինք զրական աղբյուրում մի տեղ հիշատակվում է Ուշքիլիս կամ Արտեմեդ: Ու՛մ մտքով կանցնի, որ սրանք հենց նույն էջմիածինն են: Այսպես հազարավոր անվանումներ կան: Օրինակ, Արաքս գետն ունի 52 այլ անուն, Արծկե—49, Գորիս—28, Գուգլակ—28, Կարին—79, Կեսարիա—28, Հայաստան—49, Մալաթիա—60, Մասիս—53, Նախիչեվան—52, Դիարբեքիր—38, Երզնկա—61, Խարբերդ—56, Սեան—68, Վանա լիճ—74 և այլն: Այդ տեղանունները գտնելը և ճիշտ տեղը դնելը տիտանական ջանքեր են պահանջում, և հեղինակները, նրանց օգնականները՝ քարտարանի աշխատակիցները, կարողացել են հաղթահարել այդ դժվարությունները:

Օբյեկտների տարբեր անվանումները արդյունք են այն իրողության, որ հազարամյակների ընթացքում ենթարկվել են բազում ասպատակությունների, տարբեր տիրակալներ փոխել են վարի անունը: Բոլոր հայկական բնակավայրերը, լեռները, գետերը թուրքական տիրապետության շրջանում մի շարք անգամներ վերանվանվել են:

Դրան հակառակ՝ կան նույն անունը կրող օբյեկտներ, որոնք ցրված են լեռնաշխարհով մեկ: Օրինակ սուրբ-ով սկզբով 240 կապակցություն կա (սուրբ հաշ, սուրբ Կարապետ, սուրբ Հակոբ և այլն), Աստվածածին-ով՝ 120, Ամենափրկիչ-ով՝ 15, Գյունեյ-ով՝ 30, Ագարակ-ով՝ 40 և այլն: Հեղինակները կարողացել են տեղայնացնել զրանք, գտնել լրացուցիչ պատմական անունները և հղումներ կատարել: Բառարանի ամենաաշխատատար անելիքներից մեկը սա է եղել:

Նշենք, որ բառարանը կազմելու համար անհրաժեշտ էր ստեղծել ծավալուն մի քարտարան, հավաքել տեղանունների վերաբերյալ բոլոր նյութերը: ԵՊՀ ռեկտորատը այդ հնարավորությունն ստեղծեց: Բացված քարտարանում՝ լաբորատորիայում, ընդգրկվեցին աշխատակիցներ Ջ. Ծասյանը, է. Մակարյանը, Բ. Տավուշյանը, որոնք մեծապես օգնեցին նյութերի հայտնաբերման ու մշակման գործում:

Հրատարակված բառարանում ամփոփված է քարտարանի նյութի մի մասը միայն: Փարտարանը փաստորին դարձավ հայագիտության կարևոր օջախ:

Մինչև Բառարանի արժանիքների մասին խոսելը, հարկ եմ համարում նշել նրա նշանակությունը Հայկական լեռնաշխարհի ճանաչման ճանապարհին: Բանն այն է, որ անցած 70 տարիներին, խորհրդային շրջանում, Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ հայերեն լեզվով գրեթե ոչինչ չի հրատարակվել, որպես ֆիզիկա-աշխարհագրական օբյեկտ այն չի մեկնաբանվել, ջրչերն են պատկերացնում նրա էությունը: Դա պատահական չէ: Առաջին համաշխարհային պատերազմից հետո Հայոց աշխարհը բզկտվեց, հային մնաց նրա պատմական տարածքի միայն 8 տոկոսը: Բարձր առյուծներին ձեռնտու չէր խոսք բաց անել այդ լեռնաշխարհի մասին: Ովքեր որևէ առիթով լեռնաշխարհի մասին միտք էին արտահայտում, որակավորվում էին որպես «ազգայնամոլ», հայտնվում Սիբիրի ճանապարհին: Ներկայումս, ազատության պայմաններում, մեր ժողովրդին պետք է ցույց տալ՝ որն է Հայաստան աշխարհը: Այդ տեսակետից բառարանը կարևոր աղբյուր է: Այստեղ ղեկավարված են բազմաթիվ տեղանուններ, որոնց մեկնաբանությունը գաղափար է տալիս Հայկական լեռնաշխարհի մասին:

Տեղանունների բառարանը ունի բազմաթիվ արժանիքներ: Ամենից առաջ նշենք, որ բառարանը հանրագիտարանային բնույթի է: Շատ տեղանուններ բնութագրված են բազմաբովանդակ ձևով, և ընթերցողը սպառիչ տեղեկություն է ստանում որոնվող օբյեկտի մասին: Ընդ որում, այդ նկարագրությունները գիտական բարձր մակարդակ ունեն: Այսպես օրինակ, կարևոր օբյեկտի վերաբերյալ տրվում է դիրքը, տեղանվան ծագումը, պատմական զարգացումը, տեղեկություններ ապստամբությունների մասին, երկրաբանական հիմքը, ռելիեֆը, կլիման, ջրերը, հողաբուսական ծածկույթը, տնտեսությունը, բնակիչները, նրանց զբաղմունքը, առևտուրը, արհեստները, ձեռնարկությունները, դպրոցները, մշակույթը, հրատարակվող թերթերը, ազգային-ազատագրական շարժումները, պայքարի դրվագները, պատմական հուշարձանները, կենդեցիները, տվյալ վայրի մշուսավոր մարդկանց ազգանունները:

Կարևոր արժեքներից մյուսը, հայրենասիրության զգացումի դրսևորումն է: Բնակավայրերը, քաղաքները և այլ օբյեկտներ բնութագրելիս հատուկ տեղ է տրվում ազգային-ազատագրական պայքարին: Դարեր շարունակ հայր ճզմվել է թուրքական և այլ զավթիչների կրնկի տակ և ծայրագույն լարվածության պայմաններում զենքը ձեռքին դիմել է ապստամբության: Թուրքերի կողմից 19-րդ դարի վերջին և 20-րդի սկզբին հայերի ցեղասպանության հարցերը տրվում են ամեն պատեհ առիթի դեպքում: Տրված են Զեյթունի, Սասունի, Վանի, Մուսալեռան և այլ վայրերում հերոսական դիմադրության դրվագներ՝ թվաքանակով գերազանց թուրքական հրոսակախմբերի դեմ:

Նյութի ընդգրկման տեսակետից բառարանի հեղինակների համար դժվարագույն հարցերից մեկը եղել է ֆիզիկա-աշխարհագրական միավորների ընտրության և նրանց բնութագրման հար-

ցը: Պետք է նշել, որ այն կատարված է բավական հաջող: Բազմաթիվ նման օբյեկտներ՝ լեռնաշղթաներ, հրաբխային զանգվածներ, գետեր, լճեր մեկնաբանված են:

Հեղինակները կարողացել են տարբեր գրական աղբյուրներում վետեղված իրարամերժ տեսակետներին մոտենալ քննադատորեն և գտնել ուսցիտնալը, օբյեկտների ճիշտ անվանումները: Ուրեմն բառարանում եղած նյութը հիմնականում հավաստի է, կասկածանքի տեղիք չի տալիս:

Օբյեկտների բնույթը պատմական տարրեր ժամանակներում փոփոխության է ենթարկվել: Հնարավոր է, որ հնագույն ժամանակներում ձևավորված աննշան բնակավայրը հետագայում դարձել է խոշոր քաղաք: Հեղինակները կարողացել են փոփոխությունները արձանագրել:

Բառարանում ընդգրկված է նաև Կիլիկիան: Դա միանգամայն ողջունելի է: Միջնադարի հայտնի ճանապարհորդ-աշխարհագետ Մարկո-Պոլոն դեռևս 13-րդ դարում Կիլիկիան համարում էր երկրորդ Հայաստան: Մինչև առաջին համաշխարհային պատերազմի ավարտը այս երկրի բնակչության մեծամասնությունը հայեր են եղել: Ֆրանսիացիները դավաճանելով հայերին՝ Կիլիկիան հանձնեցին Քուրքիային, և վերջինս ամենադաժան կերպով հաշվեհարդար տեսավ Անտանտի կողմից կոզող հայերի նկատմամբ: Եվ երկիրը հայաթափվեց:

Բառարանում անդրկովկասյան Հայաստանի և Արևմտյան Հայաստանի (Քուրքիայի տարածքում) տեղանունների մեկնաբանությունների մեջ նկատվում են բովանդակության տարբերություններ: Արևելյան Հայաստանի նյութն ավելի հարուստ է, և դա բացատրելի է: Արևմտյան Հայաստանի վերաբերյալ գրական աղբյուրները անհամեմատ ավելի քիչ են: Շատ տեղանունների մասին տրվում է միայն վայրի դիրքը, հակիրճ՝ բնույթը:

Նշենք, որ Տեղանունների բառարանում նյութի առյուծի բաժինը հատկացված է անվանումների ստեղծմանը, դրանց պատմական զարգացմանը: Դա հեղինակների կողմից արդարացվում է նրանով, որ անհրաժեշտ է ընթերցողի մեջ ամրացնել բնակավայրերի հայկական ծագումը, և թե ինչպես են դրանք հայաթափվել: Նյութի մատուցման տեսակետից ֆիզիկա-աշխարհագրական բնութագրությունները դիջում են պատմականին:

Բառարանի հատորներում տեղ չեն գտնել Հայաստանի Հանրապետության նորաստեղծ մարզերը, և դա բնական է, քանի որ հատորները հրատարակվել են մինչև մարզերի բաժանումը: Նախկին վարչական շրջանները տրված են մանրամասնությամբ:

Հատորներում զետեղված քարտեզները, նկարները հարստացնում են նյութը և հեշտացնում նրա ընկալումը:

«Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանը» հայ մշակույթի կարևոր արժեքներից է. այն զգալի ներդրում է մեր մշակույթի գանձարան: Հուսանք, որ բառարանի վերջին 5-րդ հատորը շուտով լույս աշխարհ կգա:

Հ. Կ. ԿԱՐՐԻՆԵԼՅԱՆ